# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 6 | Հունիս | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 6 | Հունիս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 9902208289 |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| | Պայմանագիր | |
|---|---|---|
| | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | 18 Հունվար, 2018 թ. | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

**[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզային հարկ | Այդ թվում՝ բնապահպանական հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 68109818բ/գ, | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

| Առաքող՝ | KALANTARYAN GAYANE<br>7203510093 | Ստացող | |
|---|---|---|---|
| | (անունը, ազգանունը) | | (անունը, ազգանունը) |

06/06/2019 11:44:32

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին**

26 ապրիլի 2019թ.

ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Գ.Հ.Թորոյանս, քննարկելով վարույթումս քննվող 68109818 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

2018թ. դեկտեմբերի 05-ին ժամը 20:50-ի սահմաններում ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչներ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ռազմիկ Սիմոնյանը, ոստիկանության ավագ լեյտենանտ Գարիկ Մկրտչյանը, նույն բաժնի ԱԳԸԲԿԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ավետիք Սերոբյանը և թույլտվության ավագ տեսուչ Կարեն Կարախանյանը, Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի 231/581 տնակի բնակչուհի, 1987 թվականին ծնված Սեդա Ռազմիկի Սարգսյանի վերաբերյալ Գյումրու բժշկական կենտրոնից մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ ահազանգի հիման վրա, պարզաբանումներ կատարելու նպատակով այցելել են հիշյալ հասցե, որի ընթացքում նույն հասցեի դիմաց նկատել են Սեդա Սարգսյանին, ով նույն հասցեի բնակիչ Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանի վրա բարձրաձայն բղավելով փորձել է համոզել և հանգստացնել վերջինիս: Ոստիկանության աշխատակիցները միջամտել են՝ փորձելով հանգստացնել Ա.Սարգսյանին, սակայն վերջինս չի ենթարկվել ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին և, դրսևորելով ագրեսիվ վարքագիծ, իշխանության ներկայացուցիչների նկատմամբ, նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու միջոցով, բռունցքով հարվածել է Գարիկ Մկրտչյանի դեմքին՝ շրթունքի շրջանում, վերջինիս պատճառելով մարմնական վնասվածք:

Փաստի առթիվ 2018 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 68109818 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում ձեռք են բերվել փաստական տվյալներ, որ2018թ. դեկտեմբերի 05-ին ժամը 20:50-ի սահմաններում ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչներ, ոստիկանությանավագ լեյտենանտ Ռազմիկ Սիմոնյանը, ոստիկանության ավագ լեյտենանտ Գարիկ Մկրտչյանը, նույն բաժնի ԱԳԸԲԿԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ավետիք Սերոբյանը և թույլտվության ավագ տեսուչ Կարեն Կարախանյանը, Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի 231/581 տնակի բնակչուհի, 1987 թվականին ծնված Սեդա Ռազմիկի Սարգսյանի վերաբերյալ Գյումրու բժշկական կենտրոնից մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ ահազանգի հիման վրա, պարզաբանումներ կատարելու նպատակով այցելել են հիշյալ հասցե, որի ընթացքում նույն հասցեի դիմաց նկատել են Սեդա Սարգսյանին, ով նույն հասցեի բնակիչ Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանի վրա բարձրաձայն բղավելով փորձել է համոզել և հանգստացնել վերջինիս: Ոստիկանության աշխատակիցները միջամտել են՝ փորձելով հանգստացնել Ա.Սարգսյանին, սակայն վերջինս չի ենթարկվել ոստիկանության աշխատակիցների

օրինական պահանջներին և, դրսևորելով ագրեսիվ վարքագիծ, իշխանության ներկայացուցիչների նկատմամբ, նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու միջոցով, բռունցքով հարվածել է Գարիկ Մկրտչյանի դեմքին՝ շրթունքի շրջանում, վերջինիս պատճառելով մարմնական վնասվածք:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ 27.03.2019 թվականին Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նա նա իշխանության ներկայացուցիչների նկատմամբ գործադրել է կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն՝ կապված վերջինների կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ:

**Այսպես.** 2018թ. դեկտեմբերի 05-ին, ժամը 20:50-ի սահմաններում ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչներ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ռազմիկ Սիմոնյանը, ոստիկանության ավագ լեյտենանտ Գարիկ Մկրտչյանը, նույն բաժնի ԱԳԸԲԿԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ավետիք Սերոբյանը և թույլտվության ավագ տեսուչ Կարեն Կարախանյանը Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի 231/581 տնակի բնակչուհի Սեդա Ռազմիկի Սարգսյանի մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ Գյումրու բժշկական կենտրոնից ստացված ահազանգի հիման վրա, պարզաբանումներ կատարելու նպատակով այցելել են հիշյալ հասցե, որտեղ նկատել են Սեդա Սարգսյանին, ով բարձրաձայն բղավելով փորձել է հայհոյանքներ կատարող եղբորը՝ Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանին համոզել հանդարտվել և հանգստանալ: Ոստիկանության աշխատակիցները միջամտել են՝ փորձելով կարգի հրավիրել Ա.Սարգսյանին, սակայն վերջինս չենթարկվելով ոստիկանության աշխատակիցների պատշաճ վարքագիծ դրսևորելու օրինական պահանջներին՝ իշխանության ներկայացուցիչ Գարիկ Մկրտչյանի նկատմամբ գործադրել է առողջության համար ոչ վտանգավոր բռնություն կապված նրա կողմից ծառայողական պարտականությունների կատարման հետ, բռունցքով հարվածել է Գ.Մկրտչյանի դեմքին՝ շրթունքի շրջանում պատճառելով մարմնական վնասվածք, որից հետո Ա.Սարգսյանին ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին:

Այսպիսով, Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար:

Քրեական գործով նախաքննության ընթացքում ձեռք են բերվել փաստական տվյալներ, որ Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը տառապում է << Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն էրետիկ վարքով>> հոգեկան հիվանդությամբ և հաշվառման մեջ է գտնվում <<Գյումրի հոգեկան կենտրոն>> ՓԲ ընկերությունում:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. 68109818 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝**

- Մեղադրյալ Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:

- Եթե Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

- Եթե Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև վերջինս կարող է մասնակցել քննչական և դատաքննչական գործողություններին:

- Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

- Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

**3.** Փորձագետներին վերջիններիս պահանջով տրամադրել քրեական գործի նյութերը և վերջիններիս պահանջով փորձաքննության կատարման վայր կներկայացվի փորձաքննվող Անդրանիկ Ռազմիկի Սարգսյանը:

**Ավագ քննիչ՝** **Գ.Հ.Թորոյան**